

	<p><b>ԱԳՐՈՂՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՏԵԽՆՈԼՈԳԻԱ</b>          Հայաստանի ազգային ագրարային համալսարան          AGRISCIENCE AND TECHNOLOGY    АГРОНАУКА И ТЕХНОЛОГИЯ</p>	<p>Միջազգային գիտական պարբերական <b>ISSN 2579-2822</b></p>	
--	---	--	--

Կայքէջ՝ [anau.am/hy/teghkagir](http://anau.am/hy/teghkagir)

ՀՏԴ 005.1:004(479.25)

## ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՄԱԿԱՐԴԱԿԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

**Ա.Ա. Մինասյան, Ա.Գ. Ալեքսանյան**

Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան  
[minasyan.anna@yahoo.com](mailto:minasyan.anna@yahoo.com)

### Տ Ե Ղ Ե Կ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

**Բանալի բառեր՝**

*Էլեկտրոնային կառավարում,  
տեղեկատվական տեխնոլոգիա,  
պետական ծառայություն,  
ինտերնետ,  
կառավարման համակարգ*

### Ա Ս Փ Ո Փ Ա Գ Ի Ր

Արդի շուկայական տնտեսությունում տեղեկատվական տեխնոլոգիաները գործնականում թափանցել են բոլոր ոլորտներ՝ ապացուցելով իրենց արդյունավետությունը: Այսօր դրանք կարևոր դեր են խաղում ժամանակակից պետական կառույցներում՝ ձևավորելով կառավարման նոր՝ էլեկտրոնային համակարգ:

Չնայած Հայաստանում արդեն իսկ մեկնարկել է էլեկտրոնային կառավարման ներդրման գործընթացը, սակայն դեռևս անհրաժեշտ են մի շարք միջոցառումներ՝ դրանց բարձր արդյունավետությունն ապահովելու և ոլորտում առկա խնդիրները լուծելու համար:

### Նախաբան

Ներկայումս հասարակության զարգացումը հնարավոր է պատկերացնել առանց տեղեկատվական տեխնոլոգիաների (SS): Դրանք հնարավորություն են տալիս մշակել մեծածավալ տեղեկատվություն, բարձրացնել աշխատանքի արտադրողականությունը, ինչպես ժամանակակից ռեսուրսները: Ժամանակակից պայմաններում շատ երկրներում պետական կառավարման ավտոմատացված համակարգերի կիրառումը դարձել է ժամանակի հրամայական: Էլեկտրոնային կառավարումը նպաստում է պետության կողմից մատուցվող ծառայությունների որակի բարձրացմանը, փաստաթղթաշրջանառության նվազեցմանը, կառավարչական որոշումների ընդունման գործընթացում հասարակության ներգրավմանը, պետական ապարատի գործունեության թափանցիկության ավելացմանը:

### Նյութը և մեթոդները

Էլեկտրոնային կառավարումը կարելի է բնութագրել որպես պետական մարմինների կողմից SS կիրառման հիման վրա քաղաքացիների, գործարար միջավայրի և պետական այլ մարմինների հետ շփման նոր ձև (<https://publicadministration.un.org/egovkb/en-us/About/UNeGovDD-Framework>): Բազմաթիվ առավելություններից կարելի է առանձնացնել ժամանակի և տարածության խոչընդոտների վերացումը, պետական կառավարման համակարգում կոռուպցիոն ռիսկերի նվազեցումը, վարչական ընթացակարգերի հեշտացումը: Սակայն այս համակարգի ներդրման ժամանակ առաջանում են մի շարք խնդիրներ՝ պայմանավորված հասարակության էլեկտրոնային գրագիտության ցածր մակարդակով, նոր համակարգի նկատմամբ պետական ծառայողների բացասական վերաբերմունքով, համացանցի որակով ու բարձր սակագներով, տարածվածության ցածր

մակարդակով, առկա թվային ճեղքվածքով: Իհարկե, վերոնշյալ բոլոր խնդիրները լուծելու դեպքում հնարավոր է հասնել մեծ հաջողությունների:

Տարբեր պետություններում էլեկտրոնային կառավարման զարգացման մակարդակը գտնվում է ձևավորման և վերափոխման տարբեր փուլերում: Դեռևս 2003 թվականից սկսած՝ մինչև 2005 թ., ամեն տարի, իսկ 2008 թվականից սկսած՝ յուրաքանչյուր երկու տարին մեկ անգամ, ՄԱԿ-ի կողմից հրապարակվում է երկրների էլեկտրոնային կառավարման զարգացվածության վարկանիշը՝ United Nations E-government Survey ([http://workspace.unpan.org/sites/Internet/Documents/EGovSurveyWebinar\\_Version4.pptx.pdf](http://workspace.unpan.org/sites/Internet/Documents/EGovSurveyWebinar_Version4.pptx.pdf)):

Էլեկտրոնային կառավարման զարգացվածության ինդեքսը հիմնված է պետության առցանց ներկայության փորձի նախորդ մակարդակի վրա: Այս մոդելը, ըստ քաղաքացիներին մատուցվող՝ աստիճանաբար բարդացող ծառայությունների աճող ծավալի, սահմանում է էլեկտրոնային կառավարման չորս մակարդակ, ինչը հնարավորություն է տալիս համեմատական մեթոդով պարզել երկրի դրական կամ բացասական տեղաշարժը էլեկտրոնային կառավարման զարգացման բնագավառում:

Առաջին մակարդակը զարգացող մասնակցությունն է (Emerging Presence): Դա սահմանափակ և հիմնական տեղեկատվությունն է, որի դեպքում էլեկտրոնային կառավարման առցանց ներկայությունը ներառում է տարբեր գերատեսչությունների կայք-էջերի հղումներ, քաղաքացիների համար տեղեկատվությունը փոքր ծավալով է ներկայացվում, չկա ինտերակտիվության հնարավորություն:

Երկրորդ մակարդակն ընդլայնված մասնակցությունն է (Enhanced Presence): Նման դեպքում կառավարությունը կայքի միջոցով ավելի մեծածավալ տեղեկատվություն է տրամադրում քաղաքացիներին (պետության վարած քաղաքականություն, օրենքներ, գեկույցներ, բեռնելի տվյալների բազաներ, էլեկտրոնային կառավարման ռազմավարություն):

Երրորդ մակարդակը գործարքներին մասնակցությունն է (Transactional Presence): Այն թույլ է տալիս ակտիվ համագործակցություն սահմանել քաղաքացու և կառավարության միջև: Զաղաքացիները, օգտվելով էլեկտրոնային վճարային համակարգերից, կարող են առցանց տարբերակով՝ 24/7 ռեժիմում, կատարել տարատեսակ վճարումներ, դիմել նույնականացման քարտերի, անձնագրերի, վարորդական իրավունքի ստացման և այլ ծառայություններից օգտվելու համար:

Չորրորդ մակարդակը ներգրավված մասնակցությունն է (Connect Presence): Այս դեպքում ստեղծվում են բոլոր պայմանները քաղաքացիներին կառավարչական որոշումների քննարկման և ընդունման գործընթացում ներգրավելու համար: Մասնակցությունն իրականացվում է վեբ-ձևերում մեկնաբանություններ

գրելու, բնակչության հետ ցանցային խորհրդատվական գործիքներ կիրառելու, քաղաքական և պետական մարմինների գործունեության վերաբերյալ ֆորումներ ստեղծելու, առցանց հարցումներ անցկացնելու, էլեկտրոնային փոստով տեղեկատվության ստացման համար բաժանորդագրվելու միջոցով: Այն կարելի է բնութագրել որպես G2G, G2B, G2C և դրանց հակադարձ փոխներգործությունների ակտիվ իրագործում (<https://publicadministration.un.org/egovkb/en-us/About/Overview/-E-Government-Development-Index/Online-Service>):

Ըստ եռթյան՝ էլեկտրոնային կառավարման զարգացվածության ինդեքսը (EDGI) հաշվարկվում է որպես երեք նորմավորված ցուցանիշների միջին թվաբանական՝ առցանց ծառայությունների որակ և տեսականի (Online Service Index, OSI), հեռուստակոմունիկացիոն ենթակառուցվածքի զարգացման մակարդակ (Telecommunication Infrastructure Index, TII) և մարդկային կապիտալի ծավալ (Human Capital Index, HCI):

Դիտարկելով 2018 թ. գեկույցի տվյալները՝ կարելի է նշել, որ ամբողջ աշխարհում գրեթե բոլոր երկրների էլեկտրոնային կառավարման ինդեքսը 2016 թ. համեմատությամբ բարելավվել է: Լավագույն ցուցանիշներ ունեցող երկրները (0,75-1,0) 2016 թվականին 29 էին, 2018-ին՝ 40: Դրական տեղաշարժ է նկատվում նաև նվազագույն ցուցանիշներ (0-0,25) ունեցող երկրների ցանկում: 2016 թվականին դրանց թիվը 32 էր, իսկ 2018-ին՝ 16:

**Արդյունքները և վերլուծությունը**

Էլեկտրոնային կառավարման զարգացվածության ինդեքսը որոշվում է տարբեր ցուցանիշներով, այդ թվում՝ ինտերնետի տարածվածություն, թվային ճեղքվածք, բնակչության եկամուտներ և այլն: Սակայն այդ ցուցանիշների միջև ուղղակի կապ գոյություն չունի, քանի որ, ինչպես նշվեց, այն հավաքական ցուցանիշ է և ներառում է ֆիքսված ու բջջային ինտերնետ կապի զարգացումը և հասանելիության աստիճանը, բնակչության կրթվածության մակարդակը, պաշտոնական կառավարական պորտալների, վեբ-կայքերի քանակը, առցանց ծառայությունների քանակը, բնակչության ներգրավվածությունը կառավարչական որոշումների քննարկման և ընդունման գործընթացում:

Եթե դիտարկենք 2014-2018 թթ. առաջատար պետությունների էլեկտրոնային կառավարման զարգացվածության ինդեքսի ցուցանիշները (աղ. 1), ապա կարող ենք արձանագրել հետևյալ արդյունքները. Ավստրալիան և Չարավային Կորեան մնացել են գրեթե իրենց դիրքերում, իսկ Մեծ Բրիտանիան, որը 2016 թ. զբաղեցնում էր առաջին հորիզոնականը, 2018 թ. հայտնվել է չորրորդ հորիզոնականում, ընդ որում՝ 2014 թ. զբաղեցնում էր ութերորդ հորիզոնականը: 2018 թ. տվյալներով լավագույն տասնյակում են հայտնվել նաև Շվեդիան, Ֆիլիպինյան, Նոր Զելանդիան, որոնք գրեթե պահպանել են իրենց դիրքերը, իսկ Ճապոնիան և Ֆրանսիան առաջ են անցել մեկ հորիզոնականով:

**Աղյուսակ 1.** Էլեկտրոնային կառավարման զարգացման ինդեքսներն առաջատար երկրներում\*

2014			2016			2018		
տեղ	երկիր	ինդեքս	տեղ	երկիր	ինդեքս	տեղ	երկիր	ինդեքս
61	Հայաստան	0,49997	87	Հայաստան	0,5179	87	Հայաստան	0,5944
1	Հարավային Կորեա	0,9462	1	Մեծ Բրիտանիա	0,9193	1	Դանիա	0,9150
2	Ավստրալիա	0,9103	2	Ավստրալիա	0,9143	2	Ավստրալիա	0,9053
3	Սինգապուր	0,9076	3	Հարավային Կորեա	0,8915	3	Հարավային Կորեա	0,9010
4	Ֆրանսիա	0,8938	4	Սինգապուր	0,8828	4	Մեծ Բրիտանիա	0,8999
5	Նիդերլանդներ	0,8897	5	Ֆինլանդիա	0,8817	5	Շվեդիա	0,8882
6	Ճապոնիա	0,8874	6	Շվեդիա	0,8704	6	Ֆինլանդիա	0,8815
7	ԱՄՆ	0,8748	7	Նիդերլանդներ	0,8659	7	Սինգապուր	0,8812
8	Մեծ Բրիտանիա	0,8695	8	Նոր Չեխիա	0,8653	8	Նոր Չեխիա	0,8806
9	Նոր Չեխիա	0,8644	9	Դանիա	0,8510	9	Ֆրանսիա	0,8790
10	Ֆինլանդիա	0,8449	10	Ֆրանսիա	0,8456	10	Ճապոնիա	0,8783
192	Սոմալի	0,0139	193	Սոմալի	-	193	Սոմալի	-

\* (<https://publicadministration.un.org/egovkb/portals/egovkb/documents/un/2018-survey/>)

**Աղյուսակ 2.** Էլեկտրոնային կառավարման զարգացման ինդեքսներն ԱՊՀ երկրներում

2014			2016			2018		
տեղ	երկիր	ինդեքս	տեղ	երկիր	ինդեքս	տեղ	երկիր	ինդեքս
61	Ռուսաստան	0,5897	35	Ռուսաստան	0,7215	32	Ռուսաստան	0,7969
55	Բելառուս	0,6053	49	Բելառուս	0,6625	38	Բելառուս	0,7641
28	Ղազախստան	0,7283	33	Ղազախստան	0,7250	39	Ղազախստան	0,7597
66	Մոլդովա	0,5571	65	Մոլդովա	0,5994	69	Մոլդովա	0,6590
68	Ադրբեջան	0,5472	56	Ադրբեջան	0,6274	70	Ադրբեջան	0,6574

ԱՊՀ երկրներից (աղ. 2) առաջատար դիրք է գրավում Ռուսաստանը (35-րդից բարձրացել է 32-րդ հորիզոնական): Բավական լավ ցուցանիշներով է հանդես եկել Բելառուսը (49-րդից հայտնվել է 38-րդ հորիզոնականում): Ղազախստանը թուլացրել է իր դիրքերը 6, իսկ Մոլդովան՝ 4 հորիզոնականով: Հայաստանը 2014 թ. գրավում էր 61-րդ հորիզոնականը (0,49997), 2016-ին կտրուկ իջել է 87-րդ հորիզոնական (0,5179), սակայն, ըստ 2018 թ. տվյալների, 0,5944 արդյունքով պահպանել է 87-րդ հորիզոնականը: 2016 թ. Հայաստանի դիրքերի կտրուկ թուլացումն առաջին հերթին պայմանավորված է այն հանգամանքով, որ 2014 թ. ՄԱԿ-ի մեթոդաբանությունը կտրուկ փոփոխվեց. ընդլայնվեցին ու խստացվեցին պաշտոնական կայքերի չափանիշները (բազմազան ուղիների առկայություն, շարժունակություն, ըստ սպառողի պահանջմունքների կողմնորոշում, մատուցվող ծառայությունների ընդլայնում): Իսկ Հայաստանում այդ տարիներին Էլեկտրոնային կառավարման ծառայությունները Նոր պահանջներին չէին համապատասխանում: Պաշտոնական կայքերի գնահատմամբ՝ 2018 թ.

Էլեկտրոնային կառավարման զարգացվածության ինդեքսի հաշվարկման մեթոդիկան ցուցանիշների անվանացանկի ընդլայնման նպատակով կրկին փոփոխվեց՝ իհարկե պահպանելով նախկինում ընդունված մեթոդաբանության բազային պահանջները: 2016-2018 թթ. Հայաստանում Էլեկտրոնային կառավարման զարգացման ուղղությամբ ձեռնարկվել են որոշ քայլեր, մասնավորապես՝ «Հարկատու 3» համակարգի լրիվ ադապտացում, Էլեկտրոնային առողջապահության ներդրման ուղղությամբ համապատասխան քայլերի ձեռնարկում, Էլեկտրոնային ընտրությունների ներդրման մասնակի առաջխաղացում, սակայն վարկանիշային դիրքի դրական տեղաշարժի համար նախ անհրաժեշտ է ցուցաբերել ամբողջական մոտեցում, այն է՝ զարգացնել «Էլեկտրոնային հասարակություն» հայեցակարգը:

Դիտարկելով Հայաստանում ինտերնետից օգտվողների թվի դինամիկան՝ կարող ենք արձանագրել, որ եթե 2000 թ. ինտերնետից օգտվում էր ընդամենը 30000 բաժանորդ (բնակչությունը՝ 2934152 մարդ), ապա 2018 թ. այդ ցուցանիշը կազմում էր 2126716 մարդ, այսինքն՝

բնակչության 72,5 %-ը, իսկ նույն ցուցանիշը 2016 թ. կազմում էր 1510906 մարդ կամ բնակչության 49,9 %-ը ([www.armstat.am](http://www.armstat.am)): Հետևաբար կարող ենք արձանագրել հեռուստակոմունիկացիոն ենթակառուցվածքի զարգացում: Սակայն էլեկտրոնային կառավարման կատարելագործման համար անհրաժեշտ է իրականացնել ամբողջական ռազմավարություն, այդ թվում՝ զարգացնել էլեկտրոնային հասարակությունը և էլեկտրոնային առևտուրը, բարձրացնել բնակչության էլեկտրոնային գրագիտության մակարդակը, նվազեցնել թվային ճեղքվածքը: Դեռևս 2014 թ. ապրիլի 10-ին ՀՀ կառավարությունը հաստատել է 2014-2025 թթ. էլեկտրոնային կառավարման ռազմավարական ծրագիրը: Ընդ որում՝ ծրագիրը մշակելիս հիմք է ընդունվել SS ոլորտի զարգացման և էլեկտրոնային հասարակության ձևավորման հայեցակարգին հավանություն տալու վերաբերյալ Կառավարության որոշումը:

**Եզրակացություն**

Այսպիսով, թեև Հայաստանում էլեկտրոնային կառավարման զարգացման ուղղությամբ ձեռնարկվել են բազմաթիվ քայլեր (հաստատվել է էլեկտրոնային կառավարման զարգացման ռազմավարությունը, որը ներառում է բաց կառավարման սկզբունքների ձևավորումը, հանրային ծառայությունների և բիզնես-գործընթացի վերակազմակերպումը, հանրային ծառայությունների տրամադրման ժամանակակից մի-

ջոցների սերդորումը, տվյալների կենտրոնների հիմնումը), այնուամենայնիվ այս ոլորտում դեռևս առկա են շատ խնդիրներ, մասնավորապես անհրաժեշտ է՝

- բարելավել օրենսդրական դաշտը (ընդունել էլեկտրոնային կառավարման մասին օրենք),
- վերանայել e-gov.am կայքի գործիքները, ավելացնել դրանց քանակը, ստեղծել e-gov.am կայքի բջջային հավելված,
- բարձրացնել բնակչության ինտերնետային գրագիտության մակարդակը,
- ավելացնել պետական գերատեսչություններում էլեկտրոնային եղանակով մատուցվող ծառայությունների թիվը,
- բարձրացնել էլեկտրոնային անվտանգության մակարդակը:

**Գրականություն**

1. <https://publicadministration.un.org/egovkb/en-us/About/UNeGovDD-Framework> (դիտվել է՝ 15.01.2019 թ.):
2. [http://workspace.unpan.org/sites/Internet/Documents/EGovSurveyWebinar\\_Version4.pptx.pdf](http://workspace.unpan.org/sites/Internet/Documents/EGovSurveyWebinar_Version4.pptx.pdf) (դիտվել է՝ 18.01.2019 թ.):
3. <https://publicadministration.un.org/egovkb/en-us/About/Overview/-E-Government-Development-Index/Online-Service> (դիտվել է՝ 01.03.2019 թ.):
4. [www.armstat.am](http://www.armstat.am) (դիտվել է՝ 21.01.2019 թ.):

**АННОТАЦИЯ**

**Уровень развития электронного управления в Армении**

В современной рыночной экономике информационные технологии проникли практически во все сферы деятельности, доказав свою эффективность. На сегодняшний день современные информационные технологии играют важную роль в системе государственного управления, формируя новую – электронную версию управления. И хотя в Армении процесс внедрения электронного управления можно считать уже начатым, тем не менее, необходимо осуществить ряд мер для обеспечения высокого уровня его эффективности и решения проблем в этой области.

**ABSTRACT**

**E-Governance Development Level in Armenia**

In the modern market economy information technologies are of paramount importance in all activity areas due to their substantiated effectiveness. Nowadays IT plays an important role in the state system forming new electronic management versions. Currently the process of introducing e-governance in Armenia can be considered as already launched, but it is still necessary to take appropriate measures to ensure its high efficiency and solve problems in this area.

Ընդունվել է՝ 06.03.2019 թ.  
 Գրախոսվել է՝ 03.04.2019 թ.